## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

N31 02 մարտի 2015թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 25-ի թիվ 2 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 61/ վաթսունմեկ / թերթ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.Լ.Խաչաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք,
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,25,, փետրվարի 2015 թվականի N 08

## ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 25–ի թիվ 2 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը

1.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 15– ի թիվ 03-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 15– ի թիվ 04-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

3.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 15–ի թիվ 06 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք,
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,25,, փետրվարի 2015 թվականի N 09

### ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Մ.Գարեգինյանի փետրվարի 12-ի N07/15.1/580-15 ու փետրվարի 17-ի N07/15.1/669-15 գրությունները և հաշվի առնելով, որ 2015 թվականի հունվարի 15-ի N03-Ն որոշումն նորմատիվ բնույթ չունի, համայնքի ավագանին որոշում է.

1.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 15-ի ,,2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, գյուղապետարանի աշխատակազմի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N41-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,, N03-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման համարը գրել N03 և հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***Կողմ (3)*** ***Դեմ (0)*** ***Ձեռնպահ (0)***

*ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

*ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

*ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ***

Հավելված
Նուռնուս համայնքի ավագանու 2014թ.դեկտեմբերի 15-ի թիվ 41 խմբագրված 2015թվականի փետրվարի 25-ի թ.09որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Նուռնուսի գյուղապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Գյուղապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 190 000 | 0 | 0 | 190 000 |
| 2 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 140 000 | 0 | 0 | 140 000 |
| 3 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 130 000 | 0 | 0 | 130 000 |
| 4 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 110 000 | 0 | 0 | 110 000 |
| 5 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-1 | 1 | 95 000 | 0 | 0 | 95 000 |
| 6 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 70 900 | 0 | 0 | 70 900 |
| 7 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 70 900 | 0 | 0 | 70 900 |
| | Ընդամենը | | | | 7 | 806 800 | 0 | 0 | 806 800 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք,
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,25,, փետրվարի 2015 թվականի N10-Ն

### ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N04-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 11.1 կետի պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Մ.Գարեգինյանի 2015 թվականի փետրվարի 12-ի N07/15.1/580-15 և փետրվարի 17-ի N07/15.1/669-15 գրությունները, համայնքի ավագանին որոշում է.

1.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 15-ի « Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N42-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N04-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություն և այն շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Կողմ (3)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Նոռնուս գյուղական
համայնքի ավագանու 2014թվականի
դեկտեմբերի 15-ի թիվ 42-Ն, խմբագրված
2015թվականի փետրվարի 25-ի թիվ 10 Ն
որոշման

## ՆՈՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

/հազար դրամ/

| Հ/հ | ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | Սահմանված դրույքաչափը |
|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմն./ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղ. տուրք սահմանվում է`<br>հիմնական օբյեկտի համար<br>ա/ մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում` այգեգործական /ամառանոց./ տների, ինչպես նաև 200քմ. ընդհ. մակ. ունեցող և հաս. և արտադր. նշ. օբյեկտների համար | 7500 |
| | բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`<br>բա/ 201 - 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` | 15000 |
| | բբ/ 501 - 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 25000 |
| | բգ/ 1001-ից մինչև 3000ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 35000 |
| | բդ/3001-ից և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 80000 |
| | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`<br>գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 1500 |
| | դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 2500 |
| 2 | Համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված` շին. թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`<br>ա/ չի նախատեսվում կցակառ.-ի, վերակառ.-ի շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառ.-ի /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհ. մակերեսի ավելացում, կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն | 1500 |
| | բ/ Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի « ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը` օբյեկտի ընդհանուրն մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով | 2500 |
| | գ/ Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը | |
| 3 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 2500 |

| | | |
|---|---|---|
| 4 | Համայնքի տարածքում<br>ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 5 000 |
| | բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 5 000 |
| 5 | ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար | 170 |
| | բ/ հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի , մանրածախ առևտրի կետերում , հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար | 100 000 |
| | գ/Ավտոկայանատեղի համար | - |
| | | |
| | դ/Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | - |
| | ե/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար<br>- հիմնական շինությունների ներսում /յուրաքանչյուր եռամսյակի համար/<br>- ոչ հիմնական շինությունների ներսում /յուրաքանչյուր եռամսյակի համար/ | 5000<br>1000 |
| | զ/Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար | 50 000 |
| | է/Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար սահմանվում է՝ տարվա համար | 25000 |
| 6 | Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները / սաունաները / , խաղատները ժամը 24:00 –ից հետո աշխատելու թույլտվության համար ընթացիկ տարվա համար | |
| | ա/առևտրի օբյեկտների համար | 25 000 |
| | բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50 000 |
| | գ/ բաղնիքների / սաունաների/ համար | 200 000 |
| | դ/ խաղատների կազմակերպման համար | 500 000 |
| | ե/ շահումով խաղերի կազմակերպման համար | 250 000 |
| | զ/վիճակախաղերի կազմակերպման համար | 75 000 |
| 7 | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության 1 քմ համար | |
| | ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային % արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1000 |
| | բ/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային %) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1700 |
| | գ/ այլ արտաքին գովազդի համար | 700 |
| | դ/ դատարկ գովազդային վահանակների համար | 350 |
| 8 | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար | 5 000 |
| 9 | Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների ) ծառայություն իրականացնելու թույլտվության ընթացիկ տարվա համար | 5 000 |

| Ν | Տեղական վճարներ | Սահմանված դրույքաչափը |
|---|---|---|
| 1 | համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի ղեկավարի աշխատակազմի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 5 000 |
| 2 | համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար համայնքի ղեկավարի աշխատակազմի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վ ճար՝ | 5 000 |
| 3 | համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ | 5 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք.
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

,,25,, փետրվարի 2015 թվականի N 11

### ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N06 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Մ.Գարեգինյանի 2015 թվականի փետրվարի 12-ի N07/15.1/580-15 ու փետրվարի 17-ի N07/15.1/669-15 գրությունները, համայնքի ավագանին որոշում է.

1.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 15-ի « Նուռնուս գյուղական համայնքի ղեկավարի հաղորդումը 2014 թվականի չորրորդ եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին » N06 որոշման հավելվածում կատարել փոփոխություն և այն շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ